ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԻՍՏԻԿՈՍԻ 101-ՐԴ ԵՎ 139-ՐԴ ԹՂԹԵՐԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑՈՒՆ ԵՎ ՍՄԲԱՏ Ա ԹԱԳԱՎՈՐԻՆ

Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

Բյուզանդագիտական միջազգային «Byzantion» հանդեսի վերջին համարներից մեկում լույս տեսավ Ռ. Ջենկինզի մի հոդվածը, նվիրված Կոստանդնուպոլսի պատրիարք Նիկողայոս Միստիկոսի (901—907, 912—925 թթ.) 101-րդ թղթին[1], որի հասցեատերը չի հիշատակված։

Ջենկինզը, մանրամասն ուսումնասիրության ենթարկելով նամակի բովանդակությունը, դրտնում է, որ նամակի ամենահնարավոր հասցեատերերն են հայոց Աշոտ Բ թագավորը և նշանավոր պատմաբան, հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին։ Նա միաժամանակ ցույց է տալիս, որ Նիկողայոս Միստիկոսի ուղարկած պատմուճանը, որի մասին հիշատակություն կա նամակում, հայոց թագավորի պաշտոնական ճանաչման ապացույց է։ Ջենկինզը ցույց է տալիս, որ եթե Նիկողայոս Միստիկոսի 101-րդ թղթի հասցեատեր համարենք հայոց Աշոտ Բ թագավորին և հայոց կաթողիկոսին, ապա նամակում հիշված պարագաները միանդամայն հասկանալի կդառնան։ Աշոտ Բ-ը, դրում է Ջենկինզը, դահի վրա հաջորդեց իր հորը՝ Սմբատին, արաբների կողմից վերջինիս սպանությունից հետո, 912 թ. (ավելի ճիշտ՝ 913 թ.)։ Աշոտի հայոց դահը բարձրանալուց հետո էլ երկիրը հեղեղված էր արաբների կողմից։ Ի վիճակի չլինելով միայնակ դուխ բերել երկիրը արաբներից մաքրելու դործը, Աշոտը ստիպված էր դիմելու Բյուզանդիային։ Պետք է ասել, սակայն, որ նախքան Աշոտ Բ-ը, Սմբատը ևս կանոնավորել էր իր փոխհարաբերությունները Բյուզանդիայի հետ՝ դեռևս Լևոն կայսեր ժամանակ (886—912 թթ.)։ «Թագաւորն Հոռոմոց Լևոն — դրում է Հովհաննես Դրասխանակերտցին,— ոչինչ սակաւ նախախնամէր զարքայ Սմբատ իբրև զորդի սիրելի անքակութեամբ ընդ նմա բերելով յուխտ միաբանական սիրոյ, և բազում ընծայս և պարգևս և պատիւս ամ յամէ առաքէր։ Իսկ և Սմբատ ի շնորհակալութիւն բարերարութեանն արքայի Հոռոմոց առատաձիր պարգևօք հատուցանէր զդարձ փոխարինին տասնապատիկ յաւելուածով իբրև վեհադունի քան զինքն և հօր հարազատիս»[2]։ Դրասխանակերտցին հիշատակում է նաև, որ բյուզանդական Լևոն կայսրը Սմբատին ռազմական օգնություն ցույց տալու փորձ էլ է կատարել։ Նա դրում է, որ «արքայն Հոռոմոց Բարսեղ[3] իբրև լուաւ զայս ոճիրս չարի դմեօք մածեալ բազում զօրու հորդան տուեալ դալ յօդնակցութիւն Սմբատայ՝ յանկարծակի ժամանեալ նմա ելք հասարակաց կենաց մարդկան և վախճանեալ, թագաւորէ ընդ նորա եղբայր նորուն Աղէքսանդր։ Եւ ապա շփոթ աղմկի զնովաւ շուրջ պատեալ յապստամբողաց արանց՝ և նա ևս ոչ կարաց ժամանել յօգնականութիւնս»[4]։

---

[1] R. J. H. Jenkins, Letter 101 of the Patriarche Nicolas Mysticus, Byzantion t. XXXI (1961), fasc. 1, էջ 75—80։ *Այդ թուղթը նույն պատրիարքի բազմաթիվ այլ թղթերի հետ միասին հրատարակել է նախ Անգելո Մաին, և իր նշանավոր «Հայրաբանությանն» մեջ վերահրատարակել Մինյը. տե՛ս* A. Mai, Spicilegium Romanum, X, *էջ 161—440 և* Nicolai Constantinopolitani archiepiscopi Epistolae, Migne, Patrologia graeca, t. CXI, *էջ 28—392։*

[2] *«Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 199—200։*

[3] *Դրասխանակերտցին նրան սխալմամբ անվանում է Բարսեղ, ըստ երևույթին շփոթելով* βασιλεύς — *թագավոր բառը Վասիլիոս-Բարսեղ* Βασίλειος *անվան հետ։ Այդ շրջանում Բարսեղ անունով կայսր չի եղել։ Բարսեղ Ա-ը մահացել է 886 թ., իսկ Բարսեղ Բ-ը թագավորել է 976—1025 թթ.։ Աղեքսանդրը իսկապես Լևոնի եղբայրն էր և միանձնյա թագավորեց 912 թ. մայիսի 11-ից մինչև 913 թ. հունիսի 6-ը։*

[4] Հովհաննես Դրասխանակերտցի, *էջ 233։*

Վերևում ասվածը վկայում է այն մասին, որ Բյուզանդիան շտապել էր օգտվել Անդրկովկասում ստեղծված խառը վիճակից, հանդես գալով Անդրկովկասը արաբների լծից ազատագրելու քողի տակ, բայց փաստորեն դա հետագայում լայն ծավալ ստացած նրա ագրեսիվ քաղաքականության սկիզբն էր։

Բյուզանդիայի էքսպանսիոնիստական քաղաքականության մեջ մեծ դեր էր խաղում ժամանակի պատրիարք Նիկողայոս Միստիկոսը։ Նա նամակ էր գրել հայոց կաթողիկոսին, որն այն ժամանակ, բանտից ազատվելով, արաբների հալածանքներից ապաստան էր գտել վրաց թագավոր Ատրներսեհի մոտ, Գուգարքում։ Հույն պատրիարքը խոստանում էր Հովհաննես Դրասխանակերտցուն, որ «ինքնակալ և աստուածապսակեալ թագաւորս մեր ի դէպ ժամանակի պիտոյից առաքիսցէ զօր բաղում յօգնականութիւն ձեզ. զի և կուրապաղատ եւ և աւագն Ափխազաց և իշխանք և մեծամեծք Հայոց միաբանեալք մերոյն զօրաց՝ մեծաւ օգնականութեամբն Աստուծոյ և ձերով մեծ քահանայագործութեամբդ պատերազմեալ ընդ թշնամիսն կարծեցեալ կորստեան արքանեկին սատանայի՝ վերադոյն դտցին»[5]։

Հովհաննես Դրասխանակերտցին որոշ ժամանակ անց նամակ է հղում բյուզանդական կայսր Կոստանդին Մերանածինին, որտեղ ի միջի այլոց գրում է հետևյալը. «Ահա հասեալ կամ առդրունս հզօրագունիցդ և վեհագունիկ, ինքնակալ թագաւորացդ ի հեռաստանէ աստի խնդրել ողորմութիւն ի բարեպաշտիկ և ի ներողամիտ խնամածութենէդ ձերմէ՝ ոչ միայն ինձ, այլ և բոլոր Աբքանազեանս դրոհի», «լուծէք զլուծ ի պարանոցէ մերմէ, որ ի ձեռն բռնակալիս այսմիկ ծանրացաւ մինչև ի մահ...[6]։ Օգնականութեամբ ձերով մեծաւ և փառօք և շնորհօք պատրաստեսցուք զՀայաստանեայցս ծողովուրդս»։

914 թ. ամռանը բանակցություններ վարելու համար Կոստանդնուպոլիս գնաց Աշոտ Բ-ը[7]։ Նա այնտեղ ընդունվեց մեծ պատիվներով և 915 թ. օգնական զորք ստանալով եկավ Հայաստան։ «Կայսր Կոստանդին...,— գրում է Դրասխանակերտցին,— բազում զօրավարս և զօրս Հոովմայեցիս ի ձեռն նորա դումարեալ յուղարկէ յիւրակսն աշխարհս»[8]։ Ահա ամենայն հավանականությամբ այս օգնությունը տալով, Բյուզանդիան ուզեց ոտք դնել Հայաստան և այս անգամ տիրել նրան իրականորեն և ոչ ձևականորեն։ Նիկողայոս Միստիկոսի 101-րդ նամակից կարելի է հանդիպել այդ եղրակացության։

101-րդ նամակի հասցեատերը ամենայն հավանականությամբ միմիայն Հովհաննես Դրասխանակերտցին է և ոչ Աշոտ Բ-ը, ինչպես կարծում է Ջենկինզը, Նիկողայոսը պատմության է ուղարկել ոչ թե հայոց թագավորին, ինչպես ենթադրում է նա, այլ հայոց կաթողիկոսին[10]։ Նամակից երևում է, որ Աշոտը հետամտել է իր՝ որպես թագավորի ճանաչումը Բյուզանդիայի կողմից և կայսրությունը ընդառաջ է դնացել նրան։ «Մեծ և աստվածապսակյալ կայսրը,— գրում է բյուզանդական պատրիարքը հայոց կաթողիկոսին,— ձեր խնդիրքին ուշի ուշով ունկնդիր լինելով, ընդառաջ գնաց և հաստատումն ու պատիվը, որ մեծ ցանկություն ունեցավ ստանալու նա, ում վրա— տանված է ձեր իշխանությունը[11], տվեց»։ Նամակի վերջում նույնպես գրված է՝ «նա, ում վիճակվել է ձեր իշխանությունը»[12]։ Թվում է, որ այստեղ ակնարկվում է հայոց թագավոր Աշոտի դահ բարձրանալը։ Այդ պատճառով այս նամակը պետք է որ գրված լինի 914—915 թթ. ընթացքում, ավելի ճիշտ՝ 915 թ. Աշոտ Բ-ի Կոստանդնուպոլսից բյուզանդական ուժով վերադառնալուց անմիջապես հետո։ Ջենկինզը նամակը թվագրում է շուրջ 922 թ., որ միանգամայն անհամոզեցուցիչ

5 Նույն տեղում, էջ 268։

6 Նույն տեղում, էջ 280։

7 Նույն տեղում, էջ 282։

8 Նույն տեղում, էջ 285։ Աշոտ Բ-ի Կոստանդնուպոլիս գնալու մասին հիշատակում է նաև Թեոփանեսի Շարունակողը։ Տե՛ս Theophanes Continuatus, Bonnae, 1838, էջ 387։

9 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 292—293։

10 Դեռևս 900 թ. Ատրպատականի ամիրա Յուսուֆը Դրասխանակերտցուն նմանապես գրեստ էր ուղարկել. «Բայց եւ ես նոս, որ զայս գրեցի պատուեցայ պատուասիրտքար յոստիկանէն գրեստուք ըստ օրինի կարգիս»։ Դրասխանակերտցի, էջ 198։

11 Բնագրում ὁ τὴν ὑμετέραν ἀρχὴν πεπιστευμένος.

12 Բնագրում καὶ τοῦ ἀρχεῖν ὑμῶν λαχόντος: Այս և նախորդ գեպքում ակնարկվում է ἄρχων-ը, այսինքն ἄρχων τῶν ἀρχόντων իշխանաց իշխան, ինչպես անվանում էին բյուզանդացիները հայոց թագավորին։

է։ Ինչպես կտեսնենք ստորև, 922 թ. հայ-բյուզանդական փոխհարաբերությունները արտակարգ սրված էին և նման նամակ 922 թ. գրվել չէր կարող։

Ավելի բարդ է 139-րդ նամակի հարցը։ Այն ունի հասցեատեր։ Նա կոչվում է «իշխանաց իշխան», մի տերմին, որի տակ ենթադրվում է հայոց թագավորը։ Բայց ե՞րբ է այն գրվել և ո՞ւմ է հասցեագրված։ Ջենկինզը 139-րդ նամակը նմանապես թվագրում է շուրջ 922 թ. և հարցի վերջնական լուծումը թողնում է հայ մասնագետներին։ Ինչ վերաբերում է բյուզանդագետ Դրյումելին, ապա նա գտնում է, որ այն գրված է Աշոտ Ե-ին՝ Հովհաննես Դրասխանակերտցու մահվան տարին՝ 924—925 թթ.[13]։ Նամակում հիշվում է նոր մահացած կաթողիկոսը, որի տակ ենթադրվում է Հովհաննես Դրասխանակերտցին։ Բայց վերջինս մահացավ 929 թ.[14]։ Նիկողայոս Միստիկոսը մահացել է 925 թ., հետևաբար նա չէր կարող հիշատակել Դրասխանակերտցու մահվան մասին։ Եթե նույնիսկ ընդունենք Դրասխանակերտցու մահվան մասին հայկական աղբյուրներում նշված ամենավաղ թվականը՝ 926, ապա դարձյալ անհնարին է նման հարցադրումը։

139-րդ նամակից պարզ երևում է, որ Հայաստանը գտնվում է անելանելի վիճակում։ Եթե Հայաստանը նման դժվարին վիճակում չլիներ, ապա հույն պատրիարքը հայոց թագավորին գրած նամակում չէր համարձակվի երկաբնակությունը համարել «ավելի լավը», իսկ հայոց միաբնակությունը քողարկված ձևով անվանել «հին չարափառություն» (զբյուրս զանցսէն). «կեղծիք» (ապատի)։ Եթե Հայաստանը անելանելի վիճակում չլիներ, հայոց արքան երբեք չէր համաձայնվի, թեկուզ աներես, որ հայոց կաթողիկոսը օծվի Կոստանդնուպոլսում երկաբնակ պատրիարքի կողմից։

Բյուզանդիային՝ Հայաստանի վրա գերիշխանությունը տարածելու որոշ հույսեր ներշնչել էին և՛ հայոց թագավորը, և՛ հայոց կաթողիկոսը։ Վերջիններս, իհարկե, ստիպված էին պարզապես խաբել կայսրությանը, իրենց դժվարին վիճակից դուրս գալու համար օգնություն ստանալու ակնկալությամբ։ Բայց փաստը մնում է փաստ, որ Հովհաննես Դրասխանակերտցին Կոստանդին կայսեր դրած նամակում այդպիսի ակնարկներ արել է. «Այլև զկայանս հանգստեան կենաց խաղաղականաց ընձեռել իմոցս ըստ օգոստական պերճ և պանծալի հզօր թագաւորութեանդ, զի թերևս յԵմայելականաց աստի արտաքս զերծեալ և ի հովանի թեոց ձերոց ամրացեալ և առկայացեալ՝ արածեսցուք որ ի մեզ հոտս է Աստուծոյ... Եւ օգնականութեամբ ձերով մեծաւ և փառօք և շնորհօք պատրաստեսցուք զՀայաստանեայցս ժողովուրդ՝ կազմեալ նախ Տեառն և ապա ձեզ կամօքն Աստուծոյ»[15]։ Կաթողիկոսը պարզապես հուշում է, որ արաբներին դուրս վտարելու գնով Հայաստանը համաձայն է մտնելու Բյուզանդիայի հովանու, այսինքն գերիշխանության տակ։

Նման ակնարկի մենք հանդիպում ենք նույն նամակի մի ուրիշ տեղում ևս։ «Եւ աղաչեմ զսոյն,— գրում է Հովհաննես Դրասխանակերտցին,— զի իմաստութեամբ և բարութեամբ շնչոյ ՀԵրոյ համբարձիք զձեռս ձեր ի վերայ ամբարտաւանութեան թշնամւոյն մինչև խպառ և փրկեսչիք զվիճակ ժառանգութեան ձերոյ»։

924—925 թթ. Հայաստանի վիճակը միանգամայն այլ էր։ Արաբական վտանգը արդեն երկրից վերանում էր։ Յուսուֆի փոխարեն խալիֆայությունը Հայաստան էր ուղարկել մի նոր ոստիկան Սրուկին։ Այդ մասին Դրասխանակերտցին գրում է. «Յամիրապետէն իսկ փոխանակ Յուսփայ ոստիկան հաստատեցաւ։ Եւ ապա նա ևս առաւել քան զՅուսուփ ըստ նմին սակի դնէր ուխտ միաբանական խաղաղութեան ընդ Աշոտի, և Շահանշահ զնա անուանէր»[16], այսինքն մնացյալ հայ թագավորների ավագը։ Ճիշտ է, Յուսուֆից հետո էլ արաբական առանձին ամիրաների ասպատակություններ Հայաստանում եղել են, բայց Հայաստանը այն ժամանակ այնքան էլ անօգնական չէր։ Հենց ինքը, Յուսուֆ ամիրան, ով Հայաստանի ահ ու սարսափն էր դարձել X դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում, այժմ միանգամայն այլ դիրք էր բռնել։ Նա նույնիսկ թագ ուղարկեց Աշոտ Բ-ին[17], իր իսկ կողմից սպանված Սմբատ թագավորի որդուն։ Այսպիսի պայմաններում հայոց արքան դժվար թե այնքան ստորանար, որ Բյուզանդիայից որևէ օգնություն ստանալու ակնկալությամբ համաձայնվեր, որ հայոց կաթողիկոսը օծվեր Կոստանդնուպոլսում, համաձայնվեր ընդունել և Հայաստանում տարածել քաղկեդոնականությունը, ինչպես այդ մասին գրում է Նիկողայոս Միստիկոսը իր այս նամակում։

922 կամ 924—925 թվականով թվագրել 139-րդ նամակը միանգամայն սխալ է նաև հետևյալ պատճառով։ Այդ ժամանակաշրջանում հայ-բյուզանդական հարաբերությունները չափից ավելի

---

13 Grumel, Les Regestes, № 717, էջ 197—198։

14 Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. I, սյունակ 1064։

15 Դրասխանակերտցի, էջ 282։

16 Նույն տեղում, էջ 315։

17 Դրասխանակերտցի, էջ 300.

սրվել էին։ Հայերը այն ժամանակ ոչ թե Բյուզանդիայից էին օգնություն հայցում, այլ ընդհակառակը՝ արաբ ամիրաներից և այդ օգնությունը օգտագործում էին հենց բյուզանդական կայսրության դեմ։ Այդ կապակցությամբ շատ արժեքավոր տվյալներ ունի Ստեփանոս Տարոնացին։ Նա ցույց է տալիս, որ բյուզանդական Ռոմանոս կայսրը իր թագավորության երկրորդ տարին «զումարեաց զօր բազում և դեմեսլիկոս առաքեաց ի Դուին քաղաք, յորում էր Սպքի ամիրայ, որ զԱշոտն Շահանշահ օգնական իւր արկ ի քաղաքն։ Եւ եկեալ զօրն Յունաց՝ պաշարեցին զԴուին և ոչ կարացեալ ստանալ գարձան՝ անդրէն»[18]։

Ռոմանոսի թագավորության երկրորդ տարին դա 922 թ. է։ Հետևարար այդ ժամանակաշրջանում հայ-բյուզանդական հարաբերությունները արդեն սրված էին։

Կայսրությանը դիմել նման բովանդակությամբ նամակով հայոց թագավորը կարող էր, այն է՝ առերես. միայն և միայն Հայաստանի համար ամենադժվարին պահին, այն է՝ 913 թ.։

Սակայն ինչպե՞ս համաձայնեցնենք Նիկողայոս Միստիկոսի նամակում հիշատակված կաթողիկոսի մահը 913 թ. հետ։ Ինչպես ասվեց, Դրասխանակերտցին աթոռակալել է 898 թ. և մահացել 929 թ.։ Այդ ժամանակաշրջանի ընթացքում ոչ մի այլ կաթողիկոս չի աթոռակալել։ Դրան առայժմ կարող ենք տալ միայն հետևյալ բացատրությունը։

909—910 թթ. Հայաստանի վրա սարսափ էր տարածել Յուսուֆ ուստիկանը։ Ամբողջ երկիրը հրի ու սրի էր մատնվում նրա կողմից։ Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը՝ թանկագին բնծաներով ու գանձերով ուզեց դրա առաջն առնել, բայց արդյունքը եղավ այն, որ ինքը՝ կաթողիկոսը, ընկավ Յուսուֆի ձեռքը և բանտ նետվեց։ Ինչպես ինքն է գրում այդ կապակցությամբ, «չարաչար ըստ մեղաց իմոց կապեցայ»[19]։ Յուսուֆը կաթողիկոսին մի բանտից մյուսն է նետում և հետագայում բանտարկում Դվինում. «Իսկ զիս արգելեալ ի քաղաքն Դվին,— գրում է նա,— ի մեծաղոս բանտից և երկաթի կապարանաց՝ կրեցի այնուհետև ի դահճաց անտի մահահոտ իմն լուտանօք գանս և բանտս և գելարանս և արգելարանս ի խաւարչտին տեղւոջ և յանձուկ վայրս. այլ և ի վիրապս և ի վիհս խորոց ընկեցայ սաստիկ և դառն կտտանօքն»[20]։

Հովհաննես Դրասխանակերտցու հետ միասին բանտ էին նետվել նաև բազում հայ նախարարներ և իշխաններ։ «Զի որք երբեմն ի բարձրագոյն աստիճանս նստէին,— գրում է հայոց կաթողիկոսը,— և ի խարանս պետական վերամբարձ ճոխանային, սրդ աւադիկ խարդաւանեալք պիւրաղաւ եղեն և պարտաւորք մահուն տուգանաց ի չար ուստիկանէն։ Վասնզի զոմանս և ի մեծաղոս բանտից բերեալ՝ տակաւին դատէր սրով և սովով և գանիւ. իսկ զոմանս, զոր և պատուաւորս առ ի յինքենէ թուեցուցանէր տեսողացն՝ զնոսա ի ծածուկ խարդաւանէր մահու պարտաւորութեամբ»[21]։

Մահապատժի են ենթարկվում ուրիշ շատերի շարքում և Սմբատ թագավորի բազմաթիվ ազգականներ՝ Սմբատ թագավորի քեռորդի Գրիգորը, որդին՝ Մուշեղը, եղբորորդին՝ Սմբատը և շատ ուրիշներ։ Ահա նման պայմաններում Սմբատ թագավորը, ըստ երևույթին, հույսը կորած պիտի լիներ, թե Հովհաննես կաթողիկոսը կարող է արաբների ձեռքից ազատվել։ Հովհաննես Դրասխանակերտցու երկարատև բանտարկությունը հավանարար հարդ է բարձրացրել նոր կաթողիկոսի ընտրության մասին։ Գուցե վերջին հանգամանքը Սմբատ թագավորը ցանկացել է օգտագործել Բյուզանդիայից որևէ օգնություն ստանալու համար, ձևականորեն առաջարկելով Բյուզանդիային, որ նոր կաթողիկոսը օծվի Կոստանդնուպոլսում։ Դրա համար Նիկողայոս Միստիկոսի 139-րդ նամակը պետք է, ըստ երևույթին, թվագրել 912—913 թթ. և այն պետք է ուղարկված լինի ոչ թե Աշոտ Բ-ին, այլ նրա հորը՝ Սմբատ թագավորին։

Ստորև տալիս ենք Նիկողայոս Միստիկոս պատրիարքի երկու նամակների լրիվ թարգմանությունը։

ԹՈՒՂԹ 101

Երախտապարտ բարեկամները կամ ծառաները. երբ արժանանում են որևէ մեկի բարեգործությանը, ջանք են թափում, որ նույն ձևով փոխհատույց լինեն բարերարներին։ Այդ փոխհատուցումը արտահայտվում է այն բանում, որ նրանք պատրաստակամություն են հայտնում կատարելու բարերարների ցանկությունները։ Տեսնում ես, որդի մեր, որ քեզ ցույց տրվեց աստված-

---

18 «Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական», Ս.-Պետերբուրգ, 1885, էջ 170։

19 Դրասխանակերտցի, էջ 212։

20 Նույն տեղում, էջ 215։

21 Նույն տեղում, էջ 224։

ԱՍՍՈՒԱԾԱՊԱԿՅԱԼ ԿԱՅՍԵՐ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ, ԹՈՂ ՄԵՆՔ ՉԱՍԵՆՔ, ՀԱՄԵՆԱՅՆ ԴԵՊՍ ԴՈՒ ՇԱՏ ԼԱՎ ՊԱՏԿԵՐԱՑՆՈՒՄ ԵՍ ԱՐԴ, ՔԵԶ Է ՄՆՈՒՄ, ՈՐ ԱՄԵՆ ԻՆՉՈՒՄ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏՆԵՍ ՆՐԱ ՄԵԾՈՒԹՅԱՆԸ ՑՈՒՑԱՐԵՐԵԼՈՒ ՔՈ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐ ՆԱ ԿԱՊԱՀԱՆՋԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԻՍԿ ԱՊԱՑՈՒՑԵՍ, ՈՐ ԱՐԺԱՆԻ ԵՍ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ԻՍԿ ՄԵՆՔ ԷԼ ՄԵՂ ԲԱՎԱՐԱՐՎԱԾ ԿՂՂԱՆՔ, ՈՐ ԴԱՐՁԱՆՔ ՆՄԱՆ ՄԻ ՄԱՐԴՈՒ ՄԻՋՆՈՐԴԸ։ ՄԵՐ ՄԵԾ ԵՎ ՎԵՀ ԿԱՅՍԸՐ ՈՒՐԱԽ Է ՏԵՍՆԵԼՈՎ, ՈՐ ԴՈՒ ԱՐԺԱՆԻ ԵՍ ՆՄԱՆ ՊԱՏՎԻՆ, ՈՐ ԴԻՏԱԿՑՈՒՄ ԵՍ (ՆՐԱ) ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ, ԵՎ ԴՈՒ, ԻՆՉՊԵՍ ԱՍԱՑԻ, ԹՈՂ ԳԻՏԱԿՑՈՂ ԼԻՆԵՍ ՆՐԱ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՏՎԻՆ ԱՐԺԱՆԱՆԱԼՈՎ։ ԹՈՂ ՏԵՐԸ ՔԵԶ ՈՂՋ ՊԱՀԻ։ ՈՐՊԵՍ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՔԵԶ ՈՒՂԱՐԿԵՑԻ ՊԱՏՄՈՒՃԱՆ։ ՄԵԾ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՊԱԿՅԱԼ ԿԱՅՍԸՐ ՁԵՐ ԽՆԴԻՐՔԻՆ ՈՒՇԻ ՈՒՇՈՎ ՈՒՆԿՆԴԻՐ ԼԻՆԵԼՈՎ, ԸՆԴԱՌԱՋ ԴՆԱՑ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՒ ՊԱՏԻՎԸ, ՈՐԸ ՄԵԾ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑԱՎ ՍՏՍՆԱԼՈՒ ՆՍ, ՈՒՄ ՎՍՏԱՀՎԱԾ Է ՁԵՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՎԵՑ։ ԱՀԱ ԱՅՍ (ԲՈԼՈՐԸ) ԿԱՏԱՐՎԵՑ ԿԱՅՍԵՐ ԿՈՂՄԻՑ ՁԵՂ ՀԱՄԱՐ։ ՁԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՊԱՏԿԵՐԱՑՆԻ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԱՏՎԻՐ ԵՎ ԱՅԴ ԻՍԿ ՊԱՏՃԱՌՈՎ ՊԱՏՎԻ ԲԱՐԵՐԱՐԻՆ։ ԷԼ Ի՞ՆՉ ԱՅԼ ՊԱՏԻՎ Է ԱԿՆԿԱԼՈՒՄ ԲԱՐԵՐԱՐԸ, ՔԱՆ ՍՅՆ, ՈՐ ԻՐ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆՆ ԱՐԺԱՆԱՑՈՂԸ ԱՄԵՆ ԻՆՉՈՒՄ ՑՈՒՑԱՐԵՐԻ ԻՐ ԲԱՐԵՀԱՃՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՆԱ ԱՄԵՆ ԿԵՐՊ ՀԱՄԱՄԻՏ ԼԻՆԵԼ ՆՐԱՆ ԵՎ ԿԱՏԱՐԻ ՆՐԱ ԿԱՄՔՐՀԱ։ ՄԵՆՔ ԿԱՐԻՔ ՉԵՆՔ ԶԳՈՒՄ ԵՐԿԱՐ ԽՈՍԵԼՈՒ։ ԲԱՎԱԿԱՆ Է, ՈՐ ԵՎ ՔՈ ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԱ, ՈՒՄ ՎԻՃԱԿՎԵԼ Է ՁԵՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՐԵՀԱՃ ԼԻՆԵՆ ՎԵՐՈՀԻՇՅԱԼ ՀԱՐՑԵՐՈՒՄ ԵՎ ԴԱՌՆԱՆ ԻՍԿԱԿԱՆ ԲԱՐԻԿԱՄՆԵՐ. ՆԵՐԿԱ ԵՎ ԱՊԱՑՈՒ ՍԵՐՈՒԷՆԻՐԻՆ ՑՈՒՅՑ ՏԱՔ ՁԵՐ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ, ԴՈՒՔ, ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑՈՂՆԵՐԳ, ԻՍԿԱԿԱՆ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿ ՑՈՒՅՑ ՏԱՔ։

ԹՈՒՂԹ 139

Իշխանաց իշխանին

ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՎԵԼԻ ՑԱՆԿԱԼԻ ԿԱՄ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ ԱՎԵԼԻ ՓՐԿԱՐԱՐ ԲԱՆ ՉԿԱ։ ՆՐԱ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ Է ԱՅՆ ԲԱՆԻ, ՈՐ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ Է ԱՍՏՎԱԾ։ ԻՍԿ ԱՍՏՎԱԾԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՏԱԼԻՍ Է ԱՄԵՆ ՄԻ ԲԱՐԻՔ ԵՎ ՕԳՈՒՏ, ՆԱ ՎԱՆՈՒՄ Է ԱՌԿԱ ԱՄԵՆ ՄԻ ՎՆԱՍԱԿԱՐ ԲԱՆ։ ԱՅԴ ԾԵՌՎ ԵՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՆՀԱՏՐ ԵՐԱՆԵԼԻ ԿՅԱՆՔ ԿՈՒՆԵՆԱ, ԱՊԱ ՆԱԵ ԵՐԱՆԵԼԻ ԿՅԱՆՔ ԵՎ ՎԻՃԱԿ ԿՈՒՆԵՆԱ (ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ) ՏՈՒՆ, ՔԱՂԱՔ, ՆԱԵ ԺՈՂՈՎՈՒՐԴ։ ՀԱԿԱՌԱԿ ԱՅՆ ԲԱՆԻ, ՈՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԴՊԻՍԻՆ Է, ՇԱՏԵՐԸ ԿԱՌՉՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՍԵՓԱԿԱՆ ԴԱՎԱՆԱՆՔԻՑ, ՀԱՄԱՐԵԼՈՎ ԱՅՆ ԲԱՐԵՊԱՇՏ, ՀԱՏԿԱՊԵՍ ԵԹԵ ՆՐԱՆՔ ԱՅԴ ՀԱՐՑՈՒՄ ՆԱԽԱՊԱՇԱՐՎԱԾ ԵՆ. ՔԱՆԶԻ ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄԸ ՇԱՏԱՄՈՒՐ Է ՊԱՀՈՒՄ ՀՈԳՈՒ ՄԵՋ ԴՈՂՄԱՆ, ՆՈՒՅՆԻՍԿ ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԱՅԴ (ԴՈՂՄԱՆ) ԱՄԵՆԱՎԱՏԵՐԻՑ Է ՈՒ ԿՈՐՍՏՅԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՂՆԵՐԻՑ։ ԻՆՉՊԵՍ ՕՐԻՆԱԿ ՈՐԵՎԷ ԼԱՎ ՆԵՐԿՎԱԾ (ԿՏՈՐ) ՆՈՒՅՆԻՍԿ ԲԱՂՄԻՑՍ ՋՐԻ ՄԵՋ ԴՆԵՍ, ԻՐ ԴՈՒՅՆԸ ՉԻ ԳՑՈՒՄ, ԴԵՌ ԱՎԵԼԻՆ, ԱՎԵԼԻ ՇՈՒՏ ՊԱՏՈՎՈՒՄ Է, ՔԱՆ ԴՈՒՅՆՆ Է ԿՑՈՒՄ, ԱՀԱ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲՆՈՒԹՅՈՒՆՆ ԷԼ ՆՄԱՆ ՄԻ ԲԱՆ Է։ ՈՎՔԵՐ ԻՐԵՆՑ ՀՈԳՈՒՄ ՉԱՐ ԴԱՎԱՆԱՆՔ ԵՆ ԸՆԴՈՒՆԵԼ, ԱՀԱ ՆՐԱՆՔ ՈՉ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ԵՆ ՆՐԱՆԻՑ, ՈՉ ԷԼ ՈՒԶՈՒՄ ԵՆ ԸՆԴՈՒՆԵԼ ԱՎԵԼԻ ԼԱՎ ԴԱՎԱՆԱՆՔ, ԱՅԼ ԴԵՐԱԳԱՍՈՒՄ ԵՆ ՄԻՆՉԵՎ ԻՐԵՆՑ ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋԸ (ԱՅԴՊԵՍ ՄԵՌԱԼ)։ ԱՅԴ ՆՐԱՆՔ ԵՆ, ՈՎՔԵՐ ՊՐԿՎԱԾ ԵՆ ԱՍՏՎԱԾԱՅԻՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԻՑ, ՈՎՔԵՐ ՉԵՆ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԲԱՐՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼ, ԱՅԼ ՀԱՄԱՈՐԵՆ ՄՆՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔԻ ՄԵՋ, ՈՎՔԵՐ ԱՄԵՆԵՆԻՆ ՉԵՆ ԻՄԱՆՈՒՄ, ԹԵ ԻՆՉ ԵՆ ԴԱՎԱՆՈՒՄ։ ԻՍԿ ՈՎՔԵՐ ՋԱՆՈՒՄ ԵՆ ԱՍՏՈՒԾՈ ՄԱՍԻՆ ՃՇՄԱՐԻՏ ՀԱՎԱՏՔԸ ԴԱՎԱՆԵԼ, ՆՐԱՆՔ ԵԹԵ ՆՈՒՅՆԻՍԿ ՆԱԽԱՊԱՇԱՐՎԱԾ ԼԻՆԵՆ, ՉԵՆ ՀԱՄԱՈՒՄ ՀԻՆ ՉԱՐԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄՆԱԼ, ՈՉ ԷԼ ՍԻՐՈՒՄ ԵՆ ՊԱՇՏՊԱՆԵԼ ԽԱՐԵՈՒԹՅՈՒՆԸ, ԱՅԼ ԻՍԿՈՒՅՆ, ԿԱՐԾԵՍ ԼՈՒՍՈ ՇՈՂԵՐՈՎ, ԱՅՆ Է ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔՈՎ ԼՈՒՍԱՎՈՐՎԱԾ ՀՈԳԻՆԵՐՈՎ, ՑԱՆԿԱԼԻ ԵՆ ՀԱՄԱՐՈՒՄ ՆՐԱ ՑՈՒՅՑ ՏՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ԸՆԹԱՆԱԼ, ԴՈՒՐՍ ԵՆ ԳԱԼԻՍ ԻՐԵՆՑ ԱՆՑՅԱԼՈՒՄ ՄԹԱՂՈՂ ԽԱՎԱՐԻՑ։ ՔՈ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ (ԴՐՎԱԾ ՄԵՐ) ՆԱՄԱԿԸ, Ո՛Վ ՈՐԴՅԱԿ, ՈՐՊԵՍ ՆԱԽԱՐԱՆ ԱՀԱ ԱՅՍ Է ԱՍՈՒՄ. ՆՐԱՆՔ ԱՍԱՑԻՆ, ՈՐ ՊԵՏՔ Է ՄՏԱԾԵԼ ՁԵՐ ԱՅՍ ԿՅԱՆՔԻՑ ՀԵՌԱՑԱԾ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՌԹԻՎ, ՈՐ ԴՈՒՔ, ՈՐՊԵՍ ՄԵՐ ՄԵԾ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԿԱՅՍԵՐ ՀԱՐԱՎԱՏ ԵՎ ՀԱՄԱԽՈՀ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ, ՋԱՆԱԼՈՎ ՆՐԱ ՀԵՏ ԱՄԵՆ ԻՆՉՈՒՄ ՀԱՄԱՄԻՏ ԼԻՆԵԼ. ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՔ, ՈՐ ՁԵՐ ԱՊԱԳԱ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԸ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՍՏԱՆԱ ԱՅՍՏԵՂԻ ԵԿԵՂԵՑՈՒՑ ԵՎ ԱՍՏՈՒԾՈ ՀԱՃՈՒԹՅԱՄԲ ՆՐԱՆ ՄԻԱՅՆ ՃԱՆԱՉԵՔ (ՈՐՊԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ) ՄԵՂ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ՍՈՒՐԲ ԷՈՀԱՍԵՂԱՆԻ ՇՈՒՐՋԸ ԿԱՆԳՆՈՂ։ ՈՐՈՎՀԵՏԵՎ ԱՍՏՈՒԾՈ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՊԱՏՎԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՆՈՐՀՔԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ, ՔԵԶ ԱՅԴ ԷԼ ՇՆՈՐՀՎԵՑ (ԴՈՒ ԳԻՏԵՍ, ՈՐ ԽՈՀԵՄ ԻՆԵԼՈՎ, ԱՍՏՈՒԾՈ ԻՆՉՊԻՍԻ ԲԱՐԵՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԱՐԺԱՆԱՑԱՐ, ԲԱՐԵՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՈՐԻ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻՑ ՄԵԿՆ ԷԼ ԱՅՆ Է, ՈՐ ԱՅԴՊԻՍԻ ՄԻՏՔ ՀՂԱՑԱՐ, ՈՐ ԲՈԼՈՐ ՀԱՐՑԵՐՈՒՄ ՀԱՄԱՄԻՏ ԼԻՆԵՍ ՄԵՐ ԱՍՏՎԱԾԱՊԱՀ ԿԱՅՍԵՐ)։ ՔԵԶ ՄՆՈՒՄ Է ԱՅՍՏԵՂ ՈՒՂԱՐԿԵՍ ԱՍՏՈՒԾՈ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ (ԱՌԱՋԱԳԸՐ-

22 ԲՆԱԳՐՈՒՄ ԱՅՍՊԵՍ. ՈՐ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է «ԴԱՎԱՆԱՆՔ», «ՀԱՎԱՏՔ»։

ելիք) ձեր ապագա քահանայապետին, որպեսզի (նա) ստանա բարեպաշտության առավել ճշգրիտ դավանանքը, լինելով մեզ հետ ինչքան ժամանակ որ նա ցանկանա, ծանոթանա բարեպաշտության հարցերին և եկեղեցական իրավիճակին, որից հետո, արժանանալով ձեռնադրության, վերադառնա ձեր պայծառափայլ ազնվությանը, ձեր իշխանության լիության։ Այնպես, ինչպես բարեկամության խոստովանությամբ դու մերձավոր ես մեր քրիստոսասեր կայսեր և աստուծո սրբազնագույն մեր եկեղեցուն, ապա նմանապես անհրաժեշտ է, որ դու անքակտելիորեն կապված լինես հավատո խոստովանության և ուղղափառ դավանանքին։ Այնպես չլինի, ինչպես մինչև այժմ (չգիտեմ ինչպես չարը մուտք է գործում և կարծես բարեկամանում ենք, բայց հեռու ենք կանգնում հավատո հաղորդությունից)։ Այդ հարցի կապակցությամբ մեր սրբազնագույն պատրիարք Փոտը քիչ աշխատանք չտարավ, և՛ խոսքով և՛ պատվիրակներ ուղարկելով, բայց իրերի խառնակ կրությունը խանգարեց հարցի լուծմանը։ Բայց ավելի շուտ, ինչպես վերևում ասացի, այդ մեղքերը, որոնց մասին գիտե աստված, իրենց գոյությունը պահպանեցին մինչև քո ժամանակ դրա համար, որպեսզի երևա, որ աստված այդ գործում ևս քեզ է պատվասիրում։

Ո՛վ մեր ցանկալի որդյակ, ինչպես մի քիչ առաջ ասացի, աստված քեզ ներշնչեց այդ միտքը, դրա համար մի հապաղիր ուղարկելու քո մեծապատվության և ձեր եկեղեցու մեծամեծների կողմից առաջ քաշված քահանայապետության թեկնածուին, որպեսզի նա էլ ստանա այն, ինչից զրկված լինել օրենք չէ։ Եվ աստուծով ձեզ ասել, որ նրա քահանայապետական վերակացության հետ միասին մերձեցում կլինի աստուծո հետ, քանզի աստծուն բարեպաշտությունից մոտիկ բան չկա։ Դրա հետ միասին միանգամայն ապահով կլինի նաև միությունն ու համախոհությունը մեր վեհ և մեծ կայսեր հետ, ինչպես հնազանդության ու փոխհարաբերությունների հարցերում, այնպես էլ բարեպաշտ դավանանքի միօրինակության։ Համենայն դեպս դու համոզված ես, որ հավատքի հարցում մինչև օրս հայոց տարաձայնությունը աստուծո մեր սուրբ եկեղեցու հետ հակոտնյա է ուղղափառ քարոզչության, առաքելական ու աստվածային վարդապետության։ Արդ, եթե քո ճշմարտախոհությամբ դու մտադիր ես քեզ և քո ժողովուրդը մեզ միացնել, ամեն ինչում համախոհ լինել մեզ, այլ կերպ մի վարվիր, ոչ էլ հապաղիր ձեր ապագա, ի զարդարումն ձեր սուրբ եկեղեցվո՝ սուրբ հոգու որոշմամբ ընտրված քահանայապետին մեզ մոտ ուղարկելուց։

Մաղթում ենք քեզ ողջ լինել ի տեր, պահպանված, հեռու ամենայն չարիքից և հակառակությունից, հակառակություն, որ վրա է հասնում տեսանելի կամ անտեսանելի թշնամիներից։